

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

«ԻՄ ՔԱՅԼԸ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

ՍԻՍԱԿ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գաբրիելյան,

«Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Սախարովի կենտրոն) ողջունում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում վերջապես հայրենադարձությունը խթանող նախագիծ շրջանառության մեջ դնելու որոշումը, և ուրախությամբ փաստում, որ Սախարովի կենտրոնի նախաձեռնությունը վերջապես քննարկման առարկա է դարձել և կյանքի է կոչվելու: Ցավալի է, սակայն, որ Սախարովի կենտրոնը, լինելով այս նախագծի գաղափարի տերը, չի ընդգրկվել նախագծի մշակման աշխատանքային խմբում, և հետևաբար, վերջինիս ջանքերը մնացել են աննկատ Ձեր կողմից:

Ի գիտություն Ձեզ, տեղեկացնում ենք, որ Սախարովի կենտրոնը բազմիցս դիմել էր այդ նախագծի մշակմանն օժանդակած ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (ՊԵԿ) նախագահին՝ ներկայացնելով գրավոր դիտողություններ և առաջարկություններ հայրենադարձությանը նպաստելու և դրա գործընթացը դյուրացնելու վերաբերյալ: Սակայն, ՀՀ ՊԵԿ-ը տրամադրել է բացասական պատասխաններ՝ սահմանափակվելով միայն գործող օրենսդրության անհեթեթ ու խճճված հոդվածները մեջբերելով: Փաստորեն, սույն հիմնախնդրի մասին և դրա նկատմամբ ՀՀ ՊԵԿ-ի կողմից աչալրջություն ցուցաբերելու համար անհրաժեշտ էր ընդամենը, որ Սախարովի կենտրոնը դիմեր ՀՀ վարչապետին (կից գրության պատճենը):

ՀՀ վարչապետին ուղղված գրությունը, որպես ի գիտություն, ներկայացվել է նաև ՀՀ Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարին, ՀՀ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահին,

ՀՀ ՊԵԿ նախագահին: Սակայն, նրանցից որևէ մեկի կողմից Սախարովի կենտրոնը համագործակցության և թիմային աշխատանքներում ներգրավվելու առաջարկություն չի ստացել:

Այնուհետև, պատահմամբ ֆեյսբուքյան Ձեր էջից տեղեկանում ենք, որ հայրենադարձությունը խթանող նախագիծը մշակելու նպատակով աշխատանքային թիմ է ձևավորվել և Դուք շնորհակալություն եք հայտնում այդ թիմի անդամներին: Իսկ այդ թիմի անդամներդ փորձ չեք կատարել համագործակցության առաջարկ անել այդ առաջարկությունների հեղինակ և նախաձեռնող կազմակերպությանը և ներգրավել նրա ներկայացուցչին կամ ներկայացուցիչներին այդ թիմային աշխատանքում: Հուսով ենք, որ այս նախադեպից հետո կհամագործակցեք ոչ միայն ՋԼՄ-ների, այլ նաև իրավապաշտպան կազմակերպությունների հետ, և օրենսդրական նախագծերի մշակման ամենավաղ փուլում կներգրավեք նաև նրանց ներկայացուցիչներին:

Հայաստանում տեղի ունեցած հեղափոխությունը մեզ մոտ հույս էր արթնացրել, որ նոր իշխանությունների ու հասարակական կազմակերպությունների միջև եղած անջրպետը կվերանա և համատեղ աշխատանքների շնորհիվ մեր միջև կձևավորվի իրական սոցիալական գործընկերություն. միայն համատեղ աշխատանքի և համագործակցությունների արդյունքում կկառուցվի նոր Հայաստան: Ավաղ, փորձը ցույց է տալիս, որ Հայաստանի իշխանությունների և քաղաքացիական հասարակության կառույցների միջև դեռևս կամուրջ գոյություն չունի:

Լևոն Ներսիսյան

Գործադիր տնօրեն